

այդ պատճառով էլ ներքև բերվում են տեսակարար ծախսումները, այսինքն՝ գեներատորների կարողության 1 կվտ.-ին ընկնող ծախսումները:

Առանց գեներատորների կարողությունները հաշվի, առնելու, ինքնարժեքի համեմատության դեպքում ստացվում է, որ նոր կոնստրուկցիայի գեներատորների գործարանային ինքնարժեքը մի քիչ ավելի բարձր է հին կոնստրուկցիայի գեներատորների ինքնարժեքից:

Այդ պատճառով հին և նոր սիստեմների գեներատորների ինքնարժեքի համաձայն, չի կարելի դատել նոր կոնստրուկցիաների էֆեկտիվության աստիճանի մասին, քանի որ նոր կոնստրուկցիայի գեներատորները հներից տարբերվում են նոմինալ կարողությամբ: Ուստի տընտեսական էֆեկտիվությունը վերջնականապես պարզելու համար անհրաժեշտ է համադրել տեսակարար ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ցուցանիշի անվանումը	Զարգացման միավոր	Հաստ գեներատորների		Փափոխություն + պահպանում - պակասում	
		ՄՊ-80/80	ԲՄ-92	Բարձրակարգություն	Ընդունակություն%
Նյութի տեսակարար դյուրաբեկությունը (ըստ մաքուր կրտության)	կգ/կվտ	16,58	11,91	-4,67	-28,2
Տեսակարար աշխատատարությունը	ն. ծ/կվտ	2,67	2,62	-0,05	-1,9
Տեսակարար ինքնարժեք	ռուբ/կվտ	76,2	69,8	-6,4	-8,4

ՀԱՅԵԼԵԿՏՐԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԶԵՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՑ

Գ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հայէլեկտրագործարանի ԳՀԻՖ տեխնիկա-սենտեսական հետազոտությունների բաժնի պետ

Աշխատանքի արտադրողականությունը մի մեծություն է, որ հակադրձ համեմատական է արտադրության աշխատատարությանը, այսինքն՝ որքան արտադրանքի պատրաստման աշխատա-

Մոտավորապես նույնպիսի ցուցանիշներ են ստացվում նաև հին և նոր կոնստրուկցիայի մյուս գեներատորների համեմատության ժամանակ:

Բերված տվյալներից երեսում է, որ նոր կոնստրուկցիայի գեներատորներն ունեն համեմատաբար բարձր տեսակարար ցուցանիշներ: Այսպիսով, հին կոնստրուկցիաների գեներատորները նորերով վոխարինելիս, ժողովրդական տնտեսության մեջ, գեներատորային կարողության նույն պահանջի դեպքում, ստացվում է զգալի տնտեսական էֆեկտ:

Այդ պատճառով, եթե ելնելու լինենք Հայէլեկտրագործարանի 1958 թվականի արտադրական ծրագրից՝ մինչև 100 կվա գեներատորների թողարկման վերաբերյալ, ապա արտադրության ծախսումների տարեկան տնտեսումը հին գեներատորները միասնական սերիայի գեներատորներով վոխարինելու հետևանքով կկազմի մոտավորապես 3—3,5 մլն. ռուբլի:

Իսկ եթե հաշվի առնենք, որ նոր կոնստրուկցիայի գեներատորների դետալների նորմալացման և ստանդարտացման աստիճանը բարձրացնելու շնորհիվ (տե՛ս աղյուսակ 1 և 2) պակասում են գործիքների ու հարմարանքների, սարքավորման պահպանման և այլ ծախսումները, ապա տնտեսման ընդհանուր գումարը զգալիորեն ավելի բարձր կլինի:

Ներկայումս Հայէլեկտրագործարանի և նրա մեջի կողեկտիվը աշխատում է միասնական սերիայի գեներատորների կոնստրուկցիայի հետագա կատարելագործման վրա:

Մարդությունը փոքր է, այնքան աշխատանքի արտադրողականությունը բարձր է:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական ուղիներն են՝ տեխնիկական

պրոգրեսը և արտադրության պրոցեսների անընդհատ կատարելագործումը արդյունաբերության ուժողովրդական տնտեսության մեջ:

Հայէլեկտրագործարանում տեխնիկական պրոցեսի էֆեկտիվությունը կարելի է ցույց տալ բանվորների թվի, հիմնական ֆոնդերի արժեքի և համախառն արտադրանքի ծավալի աճման համեմատության միջոցով:

Ցուցանիշներ	1950 թ.	1952 թ.	1954 թ.	1956 թ.	1958 թ. ամիս
1. Համախառն արդարանք	100	201,0	357,8	478,8	782,7
2. Հիմնական ֆոնդերի արժեքը	100	147,0	174,4	217,8	280,8
3. Բանվորների թիվը	100	135,7	173,6	235,5	311,2
3. Մեկ բանվորի միջնատքերի արժեքն ատարեկան արտադրողականությունը	100	148,2	208,1	213,3	250,8

Անհրաժեշտ է նշել, որ գործարանում արտադրանքի թողարկման աճումը կատարվել է գլխավորապես տեխնիկական անընդհատ կատարելագործման և արտադրության կազմակերպման բարելավման, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին։ Վերջինս հաստատվում է, մասնավորապես, հիմնական ֆոնդերի աճման և բանվորների թվի ու համախառն արտադրանքի հարաբերակցությամբ։

1950—1958 թթ. ընթացքում հիմնական ֆոնդերը և բանվորների թիվը աճել են 3 անգամ, իսկ արտադրության ծավալը՝ մոտավորապես 8 անգամ։ Այդ վկայում է, որ արտադրական կարողությունների օգտագործման մակարդակը մեծացել և աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է։

Աշխատանքի արտադրողականության աճման վրա ազդող գլխավոր գործուներն են՝ նոր տեխնիկայի պլանաշահի լայն արմատավորումը, սոցիալիստական մրցությունը, տեխնիկական նորմավորման ու աշխատանքի կազմակերպման բարելավումը, ինչպես նաև արտադրական կարողությունների օգտագործումը, աշխատանքի տեխնիկական և, էներգետիկ գինվածության բարձրացումը, շինվածքների կոնստրուկցիաների կատա-

րելագործումը, առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների կիրառությունը, բանվորների կուլտուրա-տեխնիկական մակարդակի և աշխատավարձի աճման բարձրացումը, աշխատանքային ժամանակի փոնդի օգտագործման բարելավումը, բանվորական ուժի հոսունության պակասեցումը և, վերջապես, արտադրությունից դուրս բանվորների սպասարկման բարելավումը։

Հայէլեկտրագործարանում աշխատանքի արտադրողականության աճման կարեռագույն գործուներից մեկը նրա տեխնիկական հագեցումն է, լայն մեքենայացումը և արտադրության հոսքային մեթոդի արմատավորումը։

Որպեսզի ցույց տանք այդ գործունի ազդեցությունը աշխատանքի արտադրողականության աճման վրա, կրերենք մեքենայացման մի քանի օրինակներ և կապարզենք արտադրական պրոցեսների մեքենայացման և աշխատանքի արտադրողականության միջև եղած կապը։

Զուգման ցեխի և գլխավոր մետալուրգի բաժնի աշխատողները ամեն օր գտնում են աշխատանքի արտադրողականության բարձրացման և ձուլման որակի բարելավման նոր ռեզերվներ, պայքարում են ձուլման թողուքների (որուց) պակասեցման համար։ Դա ապահովում է դետալների հետագա մշակման աշխատանքի ծախսումների զգալի իշեցումը մյուս ցեխներում։

Աշխատանքի արտադրողականության աճումը, ինչպես նաև արտադրանքի ինքնարժեքի իշեցումը գործարանում, ամբողջությամբ վերցրած, մեծ մասամբ կախված է ձուլման ցեխի աշխատանքի որակից, քանի որ, ըստ տեսակարար կշռի, մեքենաների ընդհանուր քաշի զգալի մասը կազմում են ձուլված դետալները։ Այսպես, օրինակ, ՍԳ—35/6 գեներատորների համար շուրջունե ձուլվածքը կազմում է 42,2 %, իսկ ՍԳ—60/6 գեներատորների համար՝ 36,5 %։

Հայէլեկտրագործարանի ձուլման ցեխի խնդիրն է ոչ միայն բարձրացնել հենց նույն ցեխի աշխատանքի արտադրողականությունը, այլև և մեխանիկական ցեխներում ապահովել աշխատանքի ծախսումների իշեցումը՝ մշակման թողուքների նվազեցման հաշվին, ինչպես նաև գտնել ձուլված դետալների ծախսության ժամկետն ավելացնելու միջոցները։

Գործարանի ձուլման արտադրությունը պատ-

կանում է աշխատատար արտադրությունների թըլին: Զեռնարկության բոլոր բանվորների մոտ 10%-ը աշխատում է ձուլման ցեխում: Մինչև մերենայացումը կաղապարման պրոցեսը կատարվում էր ձեռքով: Կաղապարման հողը ամբարձիչների օգնությամբ մտնում էր ձեռքով կաղապարման տեղամասը: Ինչպես փոքր, այնպես էլ մեծ դետալների կաղապարման արկղները ձեռքով լըցվում էին կաղապարման համարդողով: Կաղապարների պատրաստումը նույնպես ձեռքով էր կատարվում: Մինչև ձուլման ցեխի մեքենայացումը, ձուլագործ բանվորների աշխատանքի պայմանները ծանր էին, իսկ արտադրողականությունը՝ ցածր:

Աշխատանքի պայմանները բարելավելու և նրա արտադրողականությունը բարձրացնելու նըպատակով, 1956 թ. երկրորդ կեսին ձուլման ցեխում շահագործման են՝ հանձնվել կաղապարման մեքենաներ, ձուլման կոնվեյեր. էլեվատորներ, դուրս հանող վանդակներ, գրեյֆերային և մագնիսային ամբարձիչներ:

Հաշվումները ցույց են տալիս, որ նորմալ բեռնավորման դեքենայացման իրականացված կոմպլեքսը պակասեցրել է աշխատատարությունը ձուլվածքի մեկ տոննայի համար, ապահովելով աշխատանքի արտադրողականության բարձրացումը և հիմնական բանվորների աշխատավարձի տնտեսումը: Եթե մինչև ձուլման արտադրության մեքենայացումը ձուլվածքի մեկ տոննայի համար հիմնական բանվորների աշխատանքի քանակությունը կազմում էր 40,7 մարդ/ժամ, ապա մեքենայացումից հետո պահանջվել է ընդամենը 19,2 մարդ/ժամ, այսինքն՝ աշխատատարությունն իջել է 52,8 % -ով: Միաժամանակ, մի բանվորի արտադրանքի ավելացումը ձեռք էր բերվել ոչ միայն ալսպես կոչված կենդանի աշխատանքի ծախսումների նվազման հաշվին, այլև ձուլությունների մեկ տոննայի վրա ծախսվող նյութականացած աշխատանքի պակասեցման հաշվին:

Այդ նշանակում է, որ ձուլման արտադրության մեջ արտադրանքի ավելացումը միաժամանակ ուղեկցվում է վառելանյութի, կաղապարման և այլ նյութերի ծախսի պակասեցմամբ, որոնք կազմում են ձուլությունների ընդհանուր արժեքի 80—90 % -ը:

Մեքենայացման արմատավորումից և աշխա-

տանքի արտադրողականության բարձրացումից բարելավվում է արտադրական կարողությունների օգտագործումը: Բավական է ասել, որ մեքենայացումից հետո նորմալ բեռնավորման դեպքում արտադրական տարածության 1 մ²-ից պիտանի ձուլվածքի հանումը, մեքենայացումից առաջ եղած ժամանակաշրջանի համեմատությամբ, ավելացել է 63%-ով: Աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ, ձուլման ցեխը աշխատավարձի փոնդի գծով կստանամինչև 1 մլն. ոուբլու տնտեսում:

Չուման արտադրության արտադրանքը ենթարկվում է մեխանիկական մշակման և սպագնում հավաքման ցեխները (գեներատորային, տրանսֆորմատորային, կառավարման վահանների և տրանսֆորմատորային ենթակայանների, լայն սպասման շինվածքների, փոխադրովի էլեկտրակայանների և փոքր ագրեգատների), որտեղ տեղի է ունենում պատրաստի շինվածքների թողարկումը:

Մինչև վերջին ժամանակները գործարանում մեծ քանակությամբ փականագործ-հավաքողներ աշխատում էին ձեռքով, մինչեռ զանազան ստացիոնար հարմարանքների, ինչպես նաև էլեկտրական և պնկմատիկ գործիքների կիրառության միջոցով հնարավոր էր մեքենայացնել այդ աշխատանքների զգալի մասը:

Վերջին երկու-երեք տարիների ընթացքում գործարանի փականագործական-հավաքման ցեխներում աշխատանքի շատ պրոցեսներ սկսեցին մեքենայացվել: Օրինակ, գեներատորների և տրանսֆորմատորների հավաքումը փոխադրվել է կոնվեյերային հոսքի: Այստեղ էլ իրականացվում են փաթաթման, տոգորման, ներկման և փորձարկումների պրոցեսները:

Կոնվեյերների արմատավորումից ձեռքի աշխատանքը զգալիորեն կրճատվել է զանազան հարմարանքների և կոնվեյերների գծի երկայնությամբ քասավորված մեքենայացված գործիքի հաշվին: Օրինակ, այժմ բոլոտերի և պնդողակների պտուտակումը մեքենայացված պնդողակապտականությամբ կատարվում է մոտավորապես 3 անգամ ավելի արագ, քան սովորական պնդողակային դարձակով: Կոնվեյերի վրա գեներատորների հավաքումը հնարավորություն ստեղծեց աշխատանքի արտադրողականությունը բարձրաց-

նել 80 %-ով: Սակայն հաշվումները ցույց են տվել, որ կոնվեյերը կարող է ապահովել է՛լ ավելի մեծ արտադրողականություն՝ ձեռքով հավաքումից 153 %-ով բարձր՝ կոնվեյերի լրիվ բեռնավորման և նյութերով ապահովված լինելու դեպքում:

1957 և 1958 թթ. աշխատանքի արտադրողականության բարձրացումը հանգեցրել է արտադրանքի նորմաների վերանայմանը: Դրա հետեւանքով նորմաները բարձրացվել են, իսկ վարձաշափերը՝ իշեցվել: Օրինակ, գեներատորների հավաքման ու ներկման աշխատատարությունն իշել է 19,1 %-ով, այդ թվում՝ հավաքողների համար՝ 11,4 %-ով, ամբարձիչավորների համար՝ 28,6 %-ով, ներկարարների համար՝ 63,6 %-ով: Այդ ամենը կոնվեյերի շահագործման առաջին տարում տվել է 49.704 ո. տնտեսում և երկրորդ տարում՝ 70.000 ո., իսկ նորմալ բեռնավորման և կոնվեյերային հավաքումն ապահովելու դեպքում հնարավոր է մինչև 288.000 ոուրլու տնտեսում: Աշխատանքի արտադրողականության բարձրացման հետ այդ տնտեսումը գործարանը կտանավարձաշափերի նորմաների իշեցմանը զուգընթաց:

Հենց այդպիսի էֆեկտիվություն են տալիս նաև մյուս կոնվեյերները: Հոսքային հավաքման հիմնական առավելությունը, ստացիոնարի համեմատությամբ, արտադրական ցիկլի խիստ կրճատումն է և աշխատանքի առավել բարձր արտադրողականությունը:

Հոսքային հավաքման փոքր աշխատատարությունը բացատրվում է՝

1. Հավաքման պրոցեսը էլեմենտար, կրկնվող ձևերի կամ նրանց խմբերի մասնատելով, որոնք կատարում են օպերացիոն բանվորները մասնակիությամբ աշխատանքային տեղերում: Այսպես, եթե մինչև կոնվեյերների արմատավորումը, գեներատորի ոռտորների հավաքումը կատարվում էր մի աշխատանքային տեղում, մի բանվորի կողմից, ապա հոսքային մեթոդի դեպքում ոռտորը հավաքվում է առանձին բանվորների կողմից, մասնագիտացված աշխատանքային տեղերում կատարվող վեց օպերացիալով:

2. Կոնվեյերների արմատավորման հետևանքով կատարվում է աշխատանքային տեղերի մասնագիտացում, որը թույլ է տալիս ավելի լրիվ օգտագործել և սիստեմատիկորեն բարձրացնել բան-

վորների որակավորումը, բարելավել սարքավորման, հատուկ հարմարանքների օգտագործումը և բարձրորակ բանվորներին ազատել ոչ բարդ աշխատանքներից:

3. Բարելավվում է անհրաժեշտ տեխնիկական դոկումենտացիայի և հարմագործման ապահովումը, գետալների մատակարարումը, վերահսկողության կազմակերպումը, աշխատանքային տեղերի մաքրությունը և այլն:

Մեքենայացման արմատավորումը թույլ տվեց հասնելու արտադրական պրոցեսների աշխատատարության իշեցման, որի մասին են վկայում հետեւալ տվյալները. 1954 թ. մինչև 1957 թ. ներառյալ, ՍԳ—35/6 գեներատորների արտադրության աշխատատարությունը իշել է 15 %-ով, ՍԳ—60/6-ինը՝ 17,8 %-ով, ՏՄ—100/6 տրանսֆորմատորներին՝ 29 %-ով, իսկ ՏՄ—180/6-ինը՝ 22 %-ով:

Հայլեկտրագործարանի արտադրական պրոցեսների մեքենայացման մակարդակը հետայրում բարձրացնելու և տեխնոլոգիան բարելավելու նպատակով, այս տարի նախագծվել է կատարել հետեւալ հիմնական կազմակերպա-տեխնիկական միջոցառումները.

1. ՍԳ հավաքման կոնվեյերի վերակառուցումը՝ ԵՍ սերիայի 8 և 9 գաբարիտների գեներատորների հավաքման համար:

2. ԵՍ սերիայի երկրորդ կոնվեյերի պատրաստումը ու մոնտաժը:

3. Ճնշման աակ կատարվող ձևուման մի շարք դետալների յուրացումն ու փոխադրումը:

4. Վագրանկաներում եղած շուրջունե տաշեղների յուրացումն ու օգտագործումը շարդուկի մասնակի փոխարինման համար:

5. Ստատորային երկաթի ավտոմատ գրոշման համար հարմարանքի պատրաստումն ու արմատավորումը:

6. ԵՍ գեներատորների բևեռային սեգմենտների և մի շարք այլ օպերացիաների գրոշման և նախագծման ավտոմատացումը:

Հայլեկտրագործարանում նոր տեխնիկայի, նոր տեխնոլոգիական պրոցեսների արմատավորման այդ միջոցառումների տնտեսական էֆեկտիվությունը, վերջին հաշվով, առաջ կրերի աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը ու արտադրանքի ինքնարժեքի իշեցում: